# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# 2018 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-29-Ը ՌՈՒՄԻՆԻԱ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Ռումինիա (Բուխարեստ) /2018թ. նոյեմբերի 26-29-ը գործուղել

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Ռումինիայի էներգետիկայի նախարար, Միջազգային էներգետիկ խարտիայի գլխավոր քարտուղար և Էներգետիկ Խարտիայի կոնֆերանսի նախագահ

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**

   Մասնակցել Միջազգային էներգետիկ խարտիայի 29-րդ համաժողովին և «Նորարարությունն ուղղված էներգետիկ անվտանգությանը, կայունությանը և զարգացմանը» խորագրով նախարարական հանդիպմանը

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   2021թ. Էներգետիկ Խարտիայում ՀՀ նախագահության հետ կապված հարցեր:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Հանդիպել եմ Էներգետիկ Խարտիայի գլխավոր քարտողար Ուրբան Ռուսնակի հետ, պայմանավորվել ենք, որ Խարտիայի ֆինանսավորմամբ ՀՀ-ից մեկ աշխատակից 6 ամսով կմեկնի Բրյուսել Էներգետիկ Խարտիայում աշխատելու համար:

   Ելույթ եմ ունեցել Էներգետիկ Խարտիայի տարեկան համաժողովի ընթացքում՝ ներկայացնելով ՀՀ Էներգետիկայի մասին օրենսդրության, ներդրումային միջավայրի և առաջիկա տարիներին կատարվող խոշոր ծրագրերի մասին:

8. <u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>

Հանդիպման ընթացքում ստորագրված փաստաթղթեր չկան: Որոշվեց, որ Հայաստանը 2019թ. ևս կընդգրվի Էներգետիկ ներդրումների ռիսկերի գնահատման զեկույցում:

9. <u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>

Նախարարությունում պետք է քննարկենք այն անձի թեկնածությունը, ով նախարարությունից պետք է գործուղվի Խարտիայում աշխատելու, որի ընթացքում պետք է ձեռք բերի այն բոլոր գիտելիքները, որ անհրաժեշտ կլինի Խարտիայի նախագահությունը և 2021 թվականի տարեկան համաժողովը անցկացնելու համար:

10. <u>ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ</u>

3 դեկտեմբերի, 2018թ.